Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ, Ահլ ալ-ֆութուվվա վալ ֆիթյան ֆիլ մուջթամաա ալ-իսլամի (Ասպետական միությունները և կտրիճների միավորումները իսլամական հասարակությունում), Բեյրութ, 1998, 173 էջ:

1998թ. Բեյրութում «Գիտական հետազոտությունների և վավերագրության արաբական կենտրոնի» հրատարակությունների շարքում արաբերեն լեզվով լույս տեսավ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, Երևանի պետական համալսարանի արաբագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու Ալեքսանդր Խաչատրյանի մենագրությունը՝ «Ահլ ալ-ֆութուվվա վալ ֆիթյան ֆիլ մուջթամաա ալ-իսլամի» աշխատությունը: Գիրքը սկսվում է արաբ հայտնի պատմաբան Սալեհ Զահր ադ-Դինի նախաբանով, ուր բարձր դնահատական է տրվում աշխատության հիմնահարցերի լուսաբանմանը:

Ինքնին ուշագրավ է հայ արաբագետի հետազոտության (իսկ սա արդեն նրա երկրորդ աշխատությունն է, որ հրատարակվում է արաբական երկրներում)՝ արաբական գիտական կենտրոնի կողմից լույս ընծայվելու փաստը: Դա, ըստ էության, ոչ միայն վկայում է արաբական աշխարհում հայկական արաբագիտական դպրոցի բարձր հեղինակության մասին, այլև ապացուցում է այն կարևոր նշանակությունը, որ ունի հայագիտության և ընդհանրապես հայ հասարակության համար արևելագիտությունը, Մերձավոր և Մոտ արևելքի տարածաշրջանի՝ մասնավորապես՝ արաբական աշխարհի հետ գիտական և մշակութային կապերի հաստատումն ու ընդլայնումը: Այդ առումով, դժվար է գերագնահատել Ա.Խաչատրյանի ներդրումը թե՛ հայ արևելագիտության, թե՛ հայ-արաբական և թե՛ հայ-իսլամական հարաբերությունների ասպարեզում:

Հետազոտելով պատմական սկզբնաղբյուրների (գլխավորապես՝ արաբական) նյութերը՝ հեղինակը հանգում է այն եզրակացության, որ բազմիմաստ «ֆութուվվա» տերմինը նախաիսլամական և վաղ իսլամական ժամանակաշրջաններում ներկայացնում էր «ֆիթյանների» (եզ.՝ «ֆաթա» - երիտասարդ) «պատվի վարքականոն» և ընդգրկում մարդկային առաքինությունների՝ ամբողջական համալիր, որոնք արտացոլում էին բեդվին արաբների իդեալական վարքականոնը:

Հեղինակն արդարացիորեն նշում է, որ ժամանակի ընթացքում «ֆութուվվա» և «մուրուվվա» հասկացությունները դառնում են հոմանիշներ: Ընդ որում, որ ամենակարևորն է, եզրակացնում է Ա.Խաչատրյանը, «ֆութուվվա» տերմինն արտահայտել է «երիտասարդ տղամարդու» սոսկ անհատական բարոյաէթիկական հատկանիշները, բարեմասնությունները և ոչ մի կապ չի ունեցել հասարակական-քաղաքական կազմավորման հետ:

Մեր կարծիքով, Մուհամմեդ մարգարեի քարոզից հետո մուրուվվան անխուսափելիորեն կորցրեց իր սոցիոմշակութային և իրավաբարոյական դերը, աստիճանաբար վերածվելով արարողակարգային, էթիկետային հարցերի լուծմանը ծառայող դաստիարակչական մի համալիրի, որն իր տեղը գտավ ազարի (կրթված մարդկանց հատուկ դիտելիքների հանրագումար) համալիրում: Պատահական չէ, որ ազարի հիմնադիր Աբդալլահ իբն սալ-Մուկֆայի ստեղծագործություններում այս տերմինը ամենահաճախ գործածվողներից է:

Ֆութուվվան, ամենայն հավանականությամբ, նախաիսլամական շրջանում եղել է ցեղերի պատանեկան խմբերի ինիցիացիոն փորձությունների համալիրը, որն աստիճանաբար վերաիմաստավորվել է որպես ցեղի երիտասարդ, չամուսնացած անդամից պահանջվող հատկությունների համալիր:

Քաղաքում ձևավորվում են այսպես կոչված «քաղաքի տղաների» խմբեր, որտեղ կարևոր չէր սոցիալական կամ ցեղային պատկանելությունը, սակայն չափազանց կարևոր էր որոշակի հատկանիշներ ունենալը, այն է՝ խիզախություն, ճարպկություն, խորամանկություն, արագ և սրամիտ պատասխանելու ունակություն (սարի՝ լիլ-ջավար, Աբու Հանիֆա ադ-Դինավարի, Քիթաբ ալ-ախբար ատ-տիվալ) և այլն: Այս հատկությունները գալիս են փոխարինելու ֆութուվվայի հին իմաստը: Երիտասարդների այս

խմբերը չունեին ձևավորված կամ կազմակերպված բնույթ, քանի դեռ չէր դրա պահանջը: Ա.Խաչատրյանը նշում է. «Աբբասյան խալիֆայության քաղաքական տիրապետության թուլացման, իսլամական հասարակության ընդծծված շերտավորման, հասարակական անարդարությունների, անիշխանության և օտար ուժերի տիրապետության հաստատման պայմաններում արմատական փոփոխություններ են տեղի ունենում նաև Ֆութուվվայի գաղափարախոսության, դրանց անդամների քաղաքական հայացքների ու համոզմունքների և սոցիալական կազմի մեջ»: Առաջնահերթ նրանք վերածվում են կազմակերպված քաղաքական լուրջ ուժի, որի հետ հաշվի էին նստում այդ ժամանակ չախադանց թույլ տեղական իշխանությունները:

Ա.Խաչատրյանը գրում է, որ X – XՀդդ. ֆութուվվան արդեն ներկայացնում էր հասարակական ընդդիմություն՝ կառավարող իշխանությունների հանդեպ՝ հաճախ հանդես գալով տարբեր անուններով: Օրինակ՝ Իրաքի և Իրանի քաղաքներում նրանք կոչվում էին «այյար» կամ «ջավանմարդան», Սիրիայում (Դամասկոս, Հալեպ)՝ «ահդաս», Մինջին Ասիայում «ջավանան», իսկ Կովկասի կամ Փոքր Ասիայի քաղաքներում «ախի» կամ «ֆիթյան»:

Այստեղ անհրաժեշտ է որոշ դիտողություններ անել այս հարցում հեղինակի ունեցած տեսակետի վերաբերյալ: Իրականում շոշափելի տարբերություններ կան Սիրիայի «ահդասների» և Իրաքի ու Իրանի «ֆիթյանների» միջև: Ինչպես գրում է Կլ.Կանը, «ահդասը» քաղաքի բարեկեցիկ շերտերի երիտասարդ բնակիչների յուրատեսակ միավորում էր, որը զիտնականը նմանեցնում է ռազմամարզական «ակումբի»՝ դուգահեռներ անցկացնելով Հռոմի և Բյուզանդիայի պատանեկան միավորումների և քաղաքային ոստիկանության հետ:

«Ֆիթյաններին» և «այյարներին», հեղինակը հաճախ նույնացնում է, մինչդեռ, արաբական աղբյուրներում նրանք հստակ տարբերվում են իրարից: Օրինակ՝ ատ-Տաբարին գրում է 361/971 – 972թ. Բաղդադում տեղի ունեցած իրադարձությունների մասին. «Կամավոր պաշտպաններ էին ֆիթյանները, սուննիները, շիաները և այյարները», այսինքն՝ քաղաքը թշնամուց պաշտպանում էին երկու կրոնական ուղղությունների ներկայացուցիչները, քաղաքի երիտասարդության խումբը («ֆիթյան») և դողերի ու ավազակների կողքին հաճախ հիշատակվող «այյարների»՝ միջնադարյան քաղաքի յուրատեսակ լյումպենների, խումբը:

Վերլուծելով արաբական և պարսկական պատմական աղբյուրների նյութերը՝ հեղինակը ցույց է տալիս Իրաքի և Իրանի ֆիթյանների և այյարների գործունեության պատկերը IX – Xդդ., վերհանում նրանց ոչ միատարր սոցիալական կազմը: Գնահատելով նրանց գործունեությունը Բաղդադում նա հանդում է այն եզրակացության, որ թեև նրանք կարողացան պայքարի ընթացքում իրենց ձեռքը վերցնել քաղաքի իրական իշխանությունն ու կառավարումը (1135 – 1144թթ.), սակայն նրանց ելույթները բնորոշվում էին տարերայնությամբ և հանկարծակի պոռթկումներով, հանգամանք, որ յուրահատուկ էր միջնադարյան բոլոր սոցիալական շարժումներին: Ստորին խավերի՝ արհեստավորների վրա դրված «հովանավորչական հարկերը» և մեծահարուստների ունեցվածքի կողոպուտը առաջ բերեցին նրանց աղքեցության անկում: Նրանք կորցնում էին իրենց սոցիալական հենարանը: Մնկուսանալով ստորին խավերից՝ ֆիթյանները և այյարները սկսում են կապի մեջ մտնել և հովանավորություն ու պաշտպանություն փնտրել քաղաքի աղդեցիկ մարդկանց և թուրքսելջուկյան իշխանության ներկայացուցիչների շրջանում: Այս հանդամանքը ավելի է խորացնում հակասությունը նրանց և ժողովրդական խավերի միջև, որոնք թշնամաբար էին տրամադրված սելջուկյան իշխանության նկատմամբ:

Ա.Խաչատրյանը լուսաբանում է նաև ֆիթյանների ու այյարների կապերը խալիֆայության սահմանամերձ շրջաններում (Մինջին Ասիա, Փոքր Ասիա) «հերետիկոսների ու այլահավատների» դեմ կրոնական պատերազմ (ջիհադ) մղող «ղազիների» (մարտիկների) հետ: Նա իրավացիորեն նկատել է, որ որոշ հետազոտողներ ֆիթյաններին և այյարներին հաճախ նույնացնում են «ղազիների» հետ: Իրականում ֆիթյանները և այյարները գործում էին արաբական խալիֆայության կազմի մեջ մտնող

քաղաքներում և գյուղերում, բայց երբեմն կամավորական ջոկատներ էին կազմում և զազիների հետ միասին մասնակցում «սրբազան» պատերազմին խալիֆայության ծայրամասերում «անհավատների» (քրիստոնյաների) և հեթանոս թուրքերի դեմ:

Այնուհետև, հեղինակն անդրադառնում է ֆիթյանների՝ առևտրաարհեստավորական եղբայրությունների հետ XIII դարում տնտեսական, քաղաքական և գաղափարական շահերից բխած միավորմանը, որը կրում էր «ֆիթյանների եղբայրություն» անվանումը: Լուսաբանվում են նաև ֆիթյանների և մահմեդական «սուֆի» (միստիկ) միաբանությունների կապերը՝ սկսած XI դարից: Ֆիթյանների միջև առաջացած գույքային անհավասարության և շերտավորման հետևանքով նրանցից շատերը, առևտրաարհեստավորական ասպարեզում գործնական նպատակների չհասնելով, գերադասեցին նվիրվել ճգնավորական կյանքին, մտնելով սուֆիական տարբեր միաբանությունների մեջ:

Քննության առնելով ֆիթյանների գործունեությունը Կովկասի, Փոքր Ասիայի և Հայաստանի քաղաքներում (այդ թվում խառը քրիստոնյա և մահմեդական բնակչություն ունեցող որոշ քաղաքներում)՝ Ա.Խաչատրյանը նշում է, որ XIII - XIV դդ. այստեղ տարածվեցին ֆութուվվայի կազմավորումներ, որոնք հայտնի էին «ախի» (ույգուրերեն և միջին թուրքերեն նշանակում է «վեհ, առատաձեռն մարդ») անունով: «Ախիները» իրենց կոչում էին «ֆութուվվայի տեր», «ֆութուվվա կրող» և այլն: Հեղինակի կարծիքով, ախիները Իրանից Կովկաս և Փոքր Ասիա են թափանցել սելջուկյան հայտնի արշավանքներից հետո (XI - XIդդ.): Նրանց դերն ու նշանակությունը շեշտակի բարձրացավ XIIIդ. կեսերից սկսած, երբ տրոհվեց Փոքր Ասիայի Ռումի սելջուկների սուլթանությունը, և փոքրասիական քաղաքների անիշխանության պայմաններում ախիներն իրենց ձեռքը վերցրեցին տեղի իշխանությունը՝ ստանձնելով բարձր պաշտոններ: Թյուրք և մոնղոլ տարբեր իշխանների միջև ծավալված հակամարտության ժամանակ յուրաքանչյուրը ցանկանում էր իր կողմը գրավել ախիներին, որոնք դարձել էին կարևոր քաղաքական գործոն:

Ապա հեղինակը զուգահեռներ է անցկացնում նրանց և զուտ հայկական նման կազմավորումների միջև: Հայ իրականության մեջ այդ կարգի կազմավորումները հայտնի են «եղբարց միաբանութիւն» անունով: Դրանց անդամները բաժանվում էին երկու խմբի՝ «կտրիճների» և «մանուկների», իսկ ղեկավարը կոչվում էր «մանկտավագ» (կամ «մանկասար»): 1280թ. նման մի կազմավորում էր ստեղծվել Երզնկա քաղաքում, որն ուներ իր կանոնադրությունը և պաշտոնապես ճանաչված էր հայոց եկեղեցու կողմից: Այն համալրված էր «երիտասարդ և տղայահասակ մանկունք» անդամներով:

Դրա հետ մեկտեղ Ա.Խաչատրյանը արդարացիորեն նկատում է, որ Փոքր Ասիայի և Հայաստանի քաղաքներում տեղի առևտրաարհեստավորական ունևոր խավերի ներկայացուցիչները, դիրքի ու պաշտոնի հասնելու նպատակով, մտնում էին ախիների շարքերը՝ նրանց ազդեցությունը և հեղինակությունը օգտագործելու համար: XIV - XVդդ. ախիներն արդեն հասել էին բարձր և ազդեցիկ դիրքերի, տնօրինում էին տարբեր քաղաքների իրական իշխանությունը՝ դառնալով քաղաքային ազնվական խավ: Վերլուծելով տարաբնույթ աղբյուրների հիշատակությունները ախիների դավանական կազմի մասին՝ աշխատության վերջում Ա.Խաչատրյանը հանդում է այն եզրակացության, որ որոշ քաղաքներում ախիների կազմավորումներին անդամակցել են հայ և հույն ներկայացուցիչներ, որոնք, ելնելով տնտեսական և քաղաքական շահերից, ընդունել են մահմեդականություն:

Իսլամական հասարակության սոցիալ-տնտեսական պատմության առանցքային խնդիրներից մեկին նվիրված այս հետազոտությանը կարելի է տալ միանշանակ բարձր գնահատական:

Դ.Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (բան. դիտ. թեկնածու)
Ս.Ռ. ԿԱՐԱՌԵԿՅԱՆ (բան. դիտ. թեկնածու)